ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Պատմություն

Թեմա <<ԵՐԵՎԱՆԻ 1724 թ. ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ>> ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Կատարող Ծպնեցյան Զարուհի Գրիգորի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար ԵՓՐԻԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ ՊԱՏՄ. ԳԻՏ. ԹԵԿ., ԴՈՑԵՆՏ
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

1. Թուրքական զորքերի 1724թ. արշավանքը և

Երևանի հերոսական պաշտպանությունը 5

2. Թեմայի դասավանդումը ավագ դպրոցում 17

Եզրակացություն 27

Օգտագործված գրականություն 29

Հավելվածներ 31

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Երևանի և նրա շրջակայքի գյուղերի բնակիչները օսմանյան զավթիչների դեմ ազատագրական պատերազմի են դուրս եկել 1724 թվականին, 1722 թվականին սկսված թուրք-պարսկական պատերազմի ժամանակ:

Երևանի 1724թ. հերոսական պաշտպանությունը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի ուշագրավ դրվագներից մեկն է: Թեմայի համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունը կարևոր է հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության լիարժեք ընկալման համար: Այն հայրենասիրության վառ օրինակ է մատաղ սերնդի համար:

Այնուամենայնիվ, 1724թ. Երևանի պաշտպանությունը, ինչպես և 1720-ական թթ. հայոց ազատամարտն առհասարակ, իրենց պատմական բացառիկ նշանակությամբ հանդերձ, շատ առումներով տակավին մնում են մութ և ուսումնասիրության կարոտ: Ուստի թեմայի ուսումնասիրությունը դեռևս շարունակում է մնալ արդիական:

Հետազոտության նպատակը. Երևանի 1724թ. հերոսական պաշտպանության և թեմայի դասավանդման մեթոդների ուսումնասիրությունն ու վերլուծությունն է:

Հետազոտության խնդիրները.

- Ներկայացնել հայ ժողովրդի հերոսական պայքարը օտար տիրապետության դեմ
- Ցույց տալ Ռուսաստանի և մեծ տերությունների վերաբերմունքը հայ ժողովրդի ազատագրական պայքարի նկատմամբ
- Վերլուծել Երևանի դեպքերը պատմական տվյալ ժամանակաշրջանի տարածաշրջանային իրադարձությունների համատեքստում
- Ցույց տալ բերդի գրավման պատճառները, ընթացքը
- Ներկայացնել Երևանի հերոսական պաշտպանության նշանակությունը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի էջերում
- Ներկայացնել այնպիսի մեթոդներ, որոնց կիրառությունը ավելի դյուրին կդարձնի տվյալ թեմայի դասավանդումը

Հետազոտության առարկան և ժամանակագրական շրջանակը. Հետազոտության առարկան է հանդիսանում Երևանի 1724թ. հերոսական պաշտպանությունը և սովորողների ստեղծագործական (էվրիստիկական) մտածողության զարգացման, գիտելիքների ընդհանրացման և համակարգման կարողությունների ձևավորման մեթոդական խնդիրների համախումբը: Ժամանակագրական շրջանակը ընդգրկում է 1723-1724 թվականները:

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտության ընթացքում կիրառվել են դիալեկտիկայի, պատմական և տրամաբանական մեթոդները, ինչպես նաև թեմայի դասավանդման համար 2-րդ կետում ներկայացված նախընտրելի մեթոդները:

Հետազոտության կառուցվածքը. Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երկու կետից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Առաջին կետում ներկայացվել են պատմական այն նախադրյալները, որոնք առիթ տվեցին թուրքերին ներխուժելու Անդրկովկաս, այնուհետև շարժվելու դեպի Երևան: Միաժամանակ հանգամանորեն ներկայացվել է քաղաքի բնակիչների հերոսական դիմադրությունը: Դրա հետ մեկտեղ այս կետում տրվել է Երևանի խանի և պարսից շահի դիրքորոշումը քաղաքի պաշտպանության վերաբերյալ, Ամենայն հայոց կաթողիկոսի ջանքերը ժողովրդին օգնություն հասցնելու համար: Ցույց են տրվել նաև Ռուսաստանի երկդիմի խաղերը հայ ժողովրդի ճակատագիրը վճռող հարցերում: Իրադարձությունների շղթան հասցված է մինչև բանակցություններ, որոնց արդյունքում քաղաքը գրված թուրքերին է անցնում նաև վերջին հենակետ Երևանի բերդը: Անաչառ կերպով ներկայացվել է նաև Երևանի հերոսական պաշտպանության դրական և բացասական նշանակությունը:

Երկրորդ կետում ներկայացվել են այն մեթոդներն ու հնարները, որոնք կարելի է կիրառել այս թեմայի դասավանդման ընթացքում: Յուրաքանչյուր մեթոդ, ունի իր կարևորությունը, ուստի տրվել է դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը պատմության դասավանդման ընթացքում: Միաժամանա անդրադարձ է կատարվել այն միջոցներին, որոնց կիրառմամբ կարելի է ստուգել սովորողների պատմական գիտելիքները և գնահատել:

1. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ 1724 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ազատագրական շարժումը XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբներին թևակոխում է մի նոր ժամանակաշրջան։ Մինչ այդ, եթե Հայաստանի ազատագրությունը ներքին ուժերից բացի, կապում էին արևմտաեվրոպական պետությունների օգնության հետ, ապա այժմ ստեղծված նոր պայմանները հայ առաջավոր ներկայացուցիչներին թելադրում էին արտաքին օգնության հարցում վերանայել իրենց նախկին կողմնորոշումը և արևմտաեվրոպական պետությունների փոխարեն երկրի ազատագրության համար օգնության դիմել Ռուսաստանին։

XVIII դարի առաջին քառորդում Պարսկաստանի ներքին դրությունը անկայուն էր։ Աֆղանների արշավանքների ու պետության մայրաքաղաք Սպահանի գրավումը, երկրում ծայր առած երկպառակություններն ու ներքին կռիվները պետությանը հասցրել էին օրհասական վիճակի։ Պարսկաստանի ներքին խառնակ դրությունը հայտնի էր նրա դարավոր ախոյանին՝ օսմանյան Թուրքիային։[1]

Պարսկաստանի թուլացումն ու մասնատումը, Ռուսաստանի անսքող հետաքրքրությունը Անդրկովկասի նկատմամբ իրենց վրա բևեռեցին Օսմանյան Թուրքիայի ուշադրությունը։ Թուրքիան ուշի-ուշով հետևում էր տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններին և պատրաստվում էր Անդրկովկասն ու Ատրպատականը գրավելու իր հին ծրագրերի իրականացմանը։

Թուրքիան եռանդագին նախապատրաստվում էր Անդրկովկասը գրավելուն, հայ ազատագրական շարժումներն արյան մեջ խեղդելուն և Ռուսաստանը Անդրկովկասից դուրս մղելուն։ Մեր երկիրը նորից էր դառնում թուրքական հրոսակների ավազակային պատերազմների ոլորտ։ Սակայն այս անգամ մեր ժողովուրդը անտարբեր չէր այդ պատերազմների նկատմամբ, այլ զենքը ձեռքին դուրս եկավ իր հայրենիքն ազատագրելու և թուրք-պարսկական դարավոր լուծը թոթափելու։ Այդ միահամուռ պայքարում իր պատկառելի բաժինն ունի նաև Երևանի ու նրա շրջակայքի գյուղերի բնակչությունը։[2]

---

1. Հակոբյան Թ., Երևանի պատմություն(1500-1800թթ.), Երևան, 1971, էջ 65-67:
2 Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 74:

Իրավիճակի այս կտրուկ փոփոխումը և վատթարացումը սրբագրում է հայ ազատագրական շարժման հետագա պայքարի ուղղվածությունը: Այժմ օրակարգի հարց էր դառնում թուրքական ռազմակալման վտանգի դեմ պայքարի հարցը որն անշուշտ շատ ավելի բարդ էր ու դժվար և անպայման պահանջում էր Ռուսաստանի հովանավորությունը:[3]

Թեև Ռուսաստանը այսպիսի խոստումներ էր տալիս հայերին և հուսադրում նրանց, մյուս կողմից՝ առաջնորդվելով իր քաղաքական առաջնահերթ շահախնդրություններով շտապում է Թուրքիայի հետ բարելավել իր հարաբերությունները: 1724թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիր, որով Թուրքիան ճանաչում էր Ռուսաստանի տիրապետությունը Կասպից ծովի առափնյա շրջանում (Դերբենդից Մազանդարան) իսկ Ռուսաստանն էլ ճանաչեց Թուրքիայի իրավունքները Պարսկաստանին ենթակա անդրկովկասյան մյուս տարածքների նկատմամբ՝ ներառյալ Թիֆլիս, Գանձակ, Նախիջևան քաղաքները, Ղարաբաղի ու Ղափանի մարզերը, ինչպես նաև նրանց տիրապետությունը Արդեբիլ-Թավրիզ գծից դեպի հյուսիս և Թավրիզ-Քերմանշահ գծից դեպի արևմուտք ընկած իրանական հողերի վրա:[4]

Փաստորեն Անդրկովկասյան ժողովուրդների համար այս ծանր պայմանագրի ստորագրումից հետո, թուրք հրամանատարությունը կոչ ուղղեց իրեն հատկացված երկրամասում զենք բարձրացրած բնակչությանը՝ վայր դնել զենքերը և հպատակվել սուլթանի իշխանությանը: Սակայն, ապավինելով իրենց ուժին և տակավին կառչելով Ռուսաստանից սպասվող օգնության տկար հույսից, Անդրկովկասի որոշ վայրերում շարունակվեց պայքարը թուրք զավթիչների դեմ:[5]

Թուրք հրամանատարության առաջնահերթ խնդիրն էր՝ վերացնել Ռուսաստանի և Թուրքիայի արանքում խցկված հայկական սեպը: Այդ խնդիրը լուծելու համար թուրքերը պիտի տիրանային Երևանի բերդին և հատկապես ընկճեին նրա շրջակայքի հայ բնակչությանը, որը պատրաստվում էր զենքով դիմադրել զավթիչներին:[6]

---

3. Հայոց պատմության հիմնահարցեր, Երևան, 2000, էջ 108:
4. Армяно-русские отношения в первой трети XVIII века(Сборник документов), т. II, ч. II, Ереван, 1967, с. 173-177.
5. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱԱ հրատ., հ. 4, Երևան, 1972, էջ 156:
6. Նույն տեղում, էջ 157:

Անդրկովկասում ծավալված ազատագրական հուժկու շարժման փայլուն օղակներից մեկը Երևանի 1724 թվականի հերոսական պաշտպանությունն էր թուրքական մեծաթիվ բանակի դեմ:

1724թ. սկզբի դրությամբ Երևանի ռազմավարական մեծ նշանակությունը Թահմազ շահի համար է՛լ ավելի էր կարևորվում, քանզի նրա ենթակայությունից արդեն իսկ դուրս էին մնացել Իրանի կենտրոնական և արևելյան շրջանները: Կորցնելով Երևանը՝ նա զրկվելու էր Անդրկովկասում իր իշխանության ու հեղինակության վերջին մնացորդներից, վտանգելով նաև իր հիմնական ապաստարանը՝ Թավրիզն ու Արդեբիլը: Հենց Երևանի պաշտպանությունը հնարավորին չափ մոտից կազմակերպելու նպատակով 1723թ. հոկտեմբերի 29-ից մինչև 1724թ. փետրվար ամիսը Թահմազը անցկացրեց սահմանակից Նախիջևանում՝ փորձելով հրով ու սրով ստեղծել իր ուզած կարգ ու կանոնը:

Այսպիսի պայմաններում Երևանի խանի՝ հայերին զորք կազմելու թույլտվություն տալը, նրանց զենք ու զինամթերք մատակարարելը ռուսական հովանավորություն ընդունելու պատրաստակամության հետ որևէ առնչություն ունենալ չէին կարող: Պարզ է, որ ռուսների մոտենալու դեպքում 10.000-անոց կազմակերպված հայկական զինուժը ռուսների օգնությամբ վերջակետ էր դնելու Արարատյան երկրում պարսկական իշխանությանը: Կարելի է ասել, մի կողմից Երևանի խանը չի հավատացել ռուսների՝ Մերձկասպյան շրջաններից առաջխաղացման հնարավորությանը, զուցե լավատեղյակ լինելով ռուս-թուրքական շուտով կնքվելիք պայմանագրի դրույթներին (1724թ. հունիսի 12, Կ. Պոլիս), մյուս կողմից՝ նա հավատարիմ է մնացել պարսից իշխանությանը:

Հրաշալիորեն գիտակցելով հայերի տրամադրությունները, Երևանի խանը փորձել և մեծամասամբ կարողացել է լուծել կարևոր խնդիրներ, այն է. հայերի օգնությամբ դիմադրել օսմանցիներին և պաշտպանել Երևանը որքան հնարավոր է երկար և արնաքամ անել Արարատյան երկրի հայությունը, որն, ըստ ամենայնի, ազատագրական պայքարի համար նախապատրաստական որոշ աշխատանքներ վաղուց էր ձեռնարկել ու հարմար առիթի դեպքում ունակ էր ապստամբելու և միանալու Արցախում և Սյունիքում կենտրոնացած հայոց զինուժին: Արարատյան երկրի հայության ապստամբական նախապատրաստումների թվին կարելի է դասել

Երևանի և շրջակա հայկական գյուղերի բնակչության ձեռքին զգալի քանակությամբ զենքի և զինամթերքի առկայությունն ու բավականին լավ կազմակերպվածությունը, որոնք միայն Երևանի խանի՝ վերջին պահին տրամադրած աջակցության արգասիքը լինել չէին կարող:[7]

Ռուս-թուրքական պայմանագրի կնքումից անմիջապես հետո Օսմանյան բանակը 1724 թվականի գարնանը Քյոփուրլու Աբդուլլա փաշայի գլխավորությամբ Կարինից արշավեց դեպի Արևելյան Հայաստան: Թուրքերը մարտին արդեն Շիրակի վրայով անցնում են դեպի Արարատյան դաշտ: Երևանի վրա հարձակվող այդ բանակն իր կազմում ուներ 75 հազար հեծյալ և հետիոտն զինվորներ: Երևանի և Արարատյան դաշտի բնակչության առաջ ծառանում է լուրջ ու պատասխանատու խնդիր՝ պաշտպանել հայրենի երկրի կենտրոն Երևանը օսմանյան բարբարոսների ավերումներից, արգելակել օսմանցիների առաջխաղացումը դեպի ազատագրված Սյունիքն ու Ղարաբաղը և դրանով իսկ նպաստել ամբողջ Արևելյան Հայաստանի ազատագրության գործին: Օսմանյան նվաճողների դեմ Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների համատեղ պայքարը, հայ ազատագրական շարժումների հաջողությունները և Ռուսաստանի օգնության հույսը, ոգևորում և մինչ այդ չտեսնված եռանդ են ներշնչում երևանցիներին՝ օսմանյան զավթիչների դեմ մղվող պայքարում:[8] Թուրքական բանակն ամայացնում է Երևան տանող ճանապարհի վրա ընկած «վայրերն ու գյուղերը և ավելի քանի 20000 երկսեռ բնակիչ վերցնում գերի»:[9]

Նախքան թուրքական բանակի Երևան գալը, գլխավոր հրամանատար Քյոփրուլու-Աբդուլլա փաշան Յալդուզ Հասանի և Ղոչ Ալիի հրամանատարությամբ հետախուզության նպատակներով 1800 հոգանոց բաղկացած մի ջոկատ է ուղարկում Երևանի կողմերը: Աբդուլլա փաշան հատուկ մարդ է ուղարկում Էջմիածնի կաթողիկոսի մոտ և սպառնում է նրան, պատճառաբանելով թե հայերն են ռուսներին բերել Կովկաս, թե հայերը իրենց դեմ 60 հազար զինված մարդ են պատրաստել և այդ

7. Այվազյան Ա., 1724թ. երևանի պաշտպանությունը հայ ազատագրական շարժման և պարսից իշխանությունների հարաբերությունների թնջուկում, Արևելագիտության հարցեր, հ. 6, Երևան, 2006, էջ 72:

8. Միրզոյան Ա., Երևանի 1724թ. հերոսական պաշտպանությունը թուրքական զավթիչներից, «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 3, էջ 93:

9. Арутюнян П. Т., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, с. 167:

բանը նրանց վրա էժան չի նստի:[10] Այս ջոկատը գրեթե առանց լուրջ դիմադրության հասնում է Եղվարդի դաշտը: Երևանի Միհրալի խանը օսմանյան առաջապահ զորամասերի դեմ հանում է իր 12 հազարանոց բանակը: Մարտը արյունահեղ էր և երկու կողմերից էլ կային բազմաթիվ վիրավորներ: Օսմանցիները վերջ ի վերջո մարտից դուրս են գալիս հաղթանակով: Օսմանցիները խանի զորքից ոչնչացնում է 11 հազար, իսկ մնացած հազար հոգին խանի հետ միասին նահանջում են դեպի Երևան և ամրանում բերդում: Հաղթանակ տանելով Եղվարդի մոտ, թուրքերն իրենց համար ճանապարհ բացեցին դեպի Երևան և հույս ունեին առանց լուրջ դիմադրության գրավել քաղաքը:[11]

1724 թվականի ապրիլի 7-ին թուրքական բանակը մոտենում է Երևանին: Աբդուլա փաշան, նախ և առաջ, փորձում է բերդը գրավել առանց մարտի: Բանակցելու համար Միհրալի խանի մոտ է ուղարկում հատուկ պատվիրակություն: Սակայն բերդը խաղաղությամբ հանձնելու վերջինիս արած առաջարկին խանը պատասխանում է, որ այդ կարող է վճռել միայն շահը և խորհուրդ է տալիս, որ պատվիրակություն ուղարկվի նրա մոտ և եթե նա համաձայնի ու հրաման տա, ապա ինքը պարտավոր է անհապաղ կատարել այն: Խանի այդ երկդիմի պատասխանը համարելով մերժում թուրքական փաշան սկսեց պաշարել քաղաքը, դասավորել հրանոթները, փորել տալ խրամատներ և հրետանային կրակ բաց անել բերդի վրա: Միհրալի խանը ուժեր չուներ քաղաքը պաշտպանելու համար. քաղաքի բնակչությունը հույսը իր ուժերի վրա պիտի դներ: Առաջին նախաձեռնողները եղան հայերը: Նրանք արագ կերպով ջոկատներ կազմակերպեցին և ձեռնամուխ եղան քաղաքի պաշտպանության գործին: Միհրալի խանի մերժողական պատասխանը հիմնականում հետևանք էր այն բանի, որ նա իրազեկ էր հայերի մարտական տրամադրություններին և հույս ուներ հիմնականում նրանց ուժերով հակահարված տալ պաշարողներին: Թուրքական բանակի մի մասը դիրքեր էր գրավել Հրազդան գետի ափին՝ Զորագյուղի դիմաց և թնդանոթային ռմբակոծության էր ենթարկում քաղաքն ու բերդը՝ փորձելով այնտեղից մտնել քաղաք: Բայց թուրքերի գրոհներն ապարդյուն են անցնում: Այդ անհաջողությունից հետո Աբդուլլա փաշան նոր համալրում է պահանջում և 10 հազարանոց մի նոր ջոկատ ստանում: Օսմանցիները

10. Միրզոյան Ա., նույն տեղում:
11. Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 73-74:

թարմ ուժերով վերսկսում են իրենց հարձակումները: Նրանք անցնում են Հրազդան գետը, թափանցում Զորագյուղի փողոցները և ձգտում մտնել քաղաք: Սակայն հայ մարտիկները հերոսական դիմադրություն են ցույց տալիս: Նրանք Հովհաննես Հունդիբեկյանի, Պողոս Քեչիբեկյանի, Կառչիկ Հովհաննեսի և Դավիթ Միրզեջենյանի գլխավորությամբ կասեցրին թուրքերի առաջխաղացումը, ջարդեցին նրանց և ետ շպրտեցին:[12] Զորագյուղի մարտից սկսած Երևանի պաշտպանությունն ամբողջապես ընկած էր հայերի վրա: Հայերի հաղթանակը փառավոր էր, բայց կորուստն էլ մեծ էր: Այդ ճակատամարտում կորցրին 2000 մարտիկ:

Այդ ճակատամարտը լուրջ կերպով անհանգստացրեց հայերին: Նրանք գիտեին, որ այդպիսի գրոհներ նորից կլինեն, իսկ իրենք այդքան ուժ չունեն դիմադրելու: Նոր ջոկատներ կազմակերպելու և քաղաքի պաշտպանությունը ամրապնդելու համար Գրիգոր վարդապետի գլխավորությամբ Սբ. Սարգիս եկեղեցում խորհրդակցություն է հրավիրվում, որին, բացի հիշյալ զորահրամանատարներից, մասնակցում էին քաղաքի անվանի մարդիկ, Կոնդի հայ բոշաների առաջնորդները և քաղաքում տեղավորված շրջակա գյուղերի բնակչության ներկայացուցիչները: Խորհրդակցությունը որոշում է դիմադրել թշնամուն պաշտպանել քաղաքը բոլոր միջոցներով:[13]

Խորհրդակցությունից հետո քաղաքացիներից 16 հոգի, այդ թվում Փիրիգուլը, Թադեոսը, Մալխասը, Ավետիսը և ուրիշներ իրենց թաղամասերի բնակիչներից կազմակերպեցին նոր խմբեր, որոնց մեջ ընդգրկեցին նաև շրջակա գյուղերի բոլոր ռազմունակ մարդկանց: Երևանի հին թաղի երիտասարդները ևս Նիկողայոսի, Թաթիկի և այլոց գլխավորությամբ ջոկատներ կազմակերպեցին: Ոտքի ելան նաև Կոնդի հայ բոշաները՝ Ղազարոս Բաբուրյանի, Դավթի և մյուսների ղեկավարությամբ, որոնք կազմակերպեցին մի քանի հարյուր մարդուց բաղկացած մարտունակ մի ջոկատ:[14]

Հայերից կազմակերպված զորքի թիվը հասնում է 10 հազարի: Զորամասերը բաշխում են ըստ թաղամասերի և հանձնարարում հսկել քաղաք մտնող

12. Մելքոնյան Ա., Հայոց պատմության ակնարկներ(հնագույն ժամանակներից մինչև XX դարի վերջը), Երևան, 2018, էջ 183:
13. Ժամկոչյան Հ. Գ., Աբրահամյան Ա. Գ., Մելիք-Բախշյան Ս. Տ., Պողոսյան Ս. Պ., Հայ ժողովրդի պատմություն(սկզբից մինչև XVIII դարի վերջը), Երևան, 1975, էջ 681:
14. Ժամկոչյան Հ. Գ., Աբրահամյան Ա. Գ., Մելիք-Բախշյան Ս. Տ., Պողոսյան Ս. Պ., նշվ. աշխ., էջ 681:

ճանապարհները: Վճռում են միշտ մնալ մարտական պատրաստության մեջ, բայց նախահարձակ չլինել: Մարտի նետվել միայն այն ժամանակ, երբ թշնամին կանցնի գրոհի և կփորձի մտնել քաղաք: Թուրքական զորքը երկար ժամանակ չէր հանդգնում անցնել Հրազդան գետը և քաղաքի պաշարումն սկսել գետի ձախ ափից՝ երկյուղ կրելով կտրվել հիմնական ուժերից: Թուրքական զորքի դիրքերը Հրազդանի աջ ափին, բերդի դիմաց ունեին այն առավելությունը, որ բերդին մոտիկ էր ու նրա նկատմամբ ցածր լինելով՝ գրեթե զերծ էր մնում հրետանային կրակից: Սակայն քաղաքի պաշտպանների համար մեծ առավելություն էին ստեղծում այգիներն ու ծառաստանները և Հրազդան գետն իր խոր ու զառիվեր ձորով:

Երևանի բնակչության և ամրոցի կայազորի համառ դիմադրությունը հուսահատություն է առաջացնում թուրք զինվորների մեջ, նրանցից շատերը փախուստի են դիմում, թուրքական բանակում ծայր է առնում դասալքությունը:

Թուրքական բանակը վերջին անհաջող ճակատամարտից հետո միառժամանակ դադարեցրեց իր գրոհները: Բայց շուտով թուրքերին Եգիպտոսից օգնության եկան 3000 հոգանոց ընտիր զորամասեր: Սուլթանական կառավարությունը հարկադրված լրացուցիչ ուժեր է ուղարկում Երևանը պաշարող բանակին, Թավրիզ ուղարկվելու համար նախատեսված 3000 եգիպտական զինվորները, իբրև օժանդակ ուժ, շարժվում են դեպի Երևան: Եգիպտական երեքհազարանոց «ընտրյալ» զորքը նույնպես չի կարողանում փոխել մարտի ելքը: Հայերի հերոսական դիմադրությունը, նրանց անընկճելի կամքը, ինչպես և թուրքական բանակի ծանր կորուստը Աբդուլլա փաշային հարկադրեցին դադարեցնել հարձակումները և նոր օգնություն խնդրել սուլթանից: Վերջինս կարգադրում է Սարու Մուստաֆա և Ռաջաբ փաշաներին իրենց զորաբանակներով օգնության գնալ Աբդուլլային: Մինչև սրանց ժամանումը թուրքերը Կոնդի ուղղությամբ մի նոր գրոհ են կազմակերպում քաղաքի վրա: Բայց այստեղ էլ հայերի պաշտպանությունը բավականին ամուր էր: Թուրքերը դարձյալ լուրջ հարված ստանալուց հետո ետ են քաշվում: Այդ մարտում հայերը տվել են 440 վիրավոր, որից 40-ը՝ բոշաներ:[15] Շուտով տեղ հասավ թուրքերին օգնության եկող զորքը՝ շուրջ 38 հազար զինվոր: Հայերը գիտեին թուրքերի ստացած նոր համալրման մասին և սպասում էին, որ օսմանցիները նոր հարձակում կսկսեն: Իսկ հայ զորագնդերն

15. Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 86:

արյունաքամ էին եղել, նոր լրացուցիչ ուժեր չկային և ոչ մի տեղից օգնություն ստանալու հույս չունեին: Ռուսական դեսպան Ի. Նեպլյուևը հաղորդում է նաև, որ Երևանի բերդը պաշտպանելու համար պարսիկների ուղարկած օգնական 10 հազարանոց զորախումբը թուրքերի կողմից ջախջախվել է Նախիջևանի մոտ, և այդպիսով, Նախիջևանը գրավելուց հետո, Երևանի կապը Պարսկաստանի հետ կտրվել է: Հետևաբար պաշտպանության ամբողջ ծանրությունը ընկել է տեղի ազգաբնակչության և կայազորի վրա:[16]

Թուրքական լրացուցիչ զորքերի գալուց հետո փաշաները որոշում են քաղաքի վրա միանգամից հարձակվել չորս կողմից և մարտնչել մինչև վերջ՝ թույլ չտալով զորքին որևէ նահանջ կատարելու: Թուրքական մեծաթիվ բանակի համար մարտավարության այդ ձևը հարմար էր: Չորս կողմից հարձակվելով մեծ տարածության վրա փռված քաղաքի փոքրաթիվ պաշտպանների վրա՝ թուրքերը դրանով փաստորեն ապակենտրոնացնում էին հայերի ուժերը և խափանում նրանց ջոկատների փոխադարձ օգնության գործը:

Բերդում եղած պարսիկները իրենց թնդանոթներով թշնամուն այլևս վնաս չէին կարող պատճառել, որովհետև անհնարին էր թնդանոթներով գնդակոծել նրանց դիրքերը: Հայերը սակավաթիվ ուժերով թուրքական ավելի քան 70 հազարանոց բանակի դեմ մնացել էին մենակ՝ ճակատ առ ճակատ: Դրությունը ահավոր էր: Եվ ահա նրանք նորից են հավաքվում Սբ. Սարգիս եկեղեցում խորհրդակցելու: Որոշվում է բանակցություն սկսել թուրքական հրամանատարության հետ քաղաքն առանց մարտի հանձնելու և դրանով իսկ կանխելու բնակչության կոտորածն ու ավարառությունը: Բանակցություն սկսելու համար կար մի լուրջ դժվարություն: Օսմանյան առաջապահ զինվորները թույլ չէին տալիս բանագնացներին հանդիպել հրամանատարության հետ և տեղնուտեղը սպանում էին նրանց: Հայերին մնում էր կռվել, կռվել մինչև վերջին շունչը, վերջին կաթիլ արյունը:

1724թ. թվականի հունիսի 7-ի վաղ առավոտյան թուրքական բանակն սկսեց չորս կողմից գրոհել քաղաքի վրա: Բազմահազար թուրք զինվորներ թափանցեցին քաղաքի փողոցները, ամենուրեք հանդիպելով հայ մարտիկների անձնուրաց և հերոսական պաշտպանության: Ձեռնամարտի վերածված ճակատամարտը տևում է ամբողջ օրը՝

16. Մարտիրոսյան Վ. Մ., Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 187-191:

մինչև ուշ երեկո։ Երկու կողմերը տալիս են մեծ թվով զոհեր։ Զոհերի գնով այնուամենայնիվ թուրքերին հաջողվում է կոտրել պաշտպանների դիմադրությունը, կոտորել նրանց և շատերին գետահեղձ անել։ Այսպիսով, թշնամու ուժերի խիստ գերազանցության պայմաններում, չնայած հայերի հերոսական ու անձնազոհ պաշտպանությանը, Աբդուլլա փաշային հաջողվում է երկու ամիս տևող արյունահեղ մարտերից հետո և ավելի քան 15.000 թուրքական զինվորների արյան գնով հենց նույն օրը գրավել քաղաքը։[17] Թուրքերը գրավում են բուն քաղաքը՝ գերեվարելով նրա հերոս պաշտպանների կանանց ու երեխաների՝ նրանց նկատմամբ գործադրելով բարբարոսական բռնություններ։ Այս ձեռնամարտից առաջ, չհաշված պարսկական կայազորի հետ մղած մարտերը, միայն հայկական փոքրիկ ջոկատը 3-4 անգամ ջարդել էր թշնամուն և ետ շպրտել հայրենի քաղաքից։[18] Երևանցիների և թուրքական նվաճման ու բռնությունների վտանգից խուսափելու համար քաղաքում ապաստանած Առինջի, Ավանի, Կավակերտի, Փարաքարի և մյուս գյուղերի բնակիչների մղած այդ հերոսամարտերը կազմում են մեր ժողովրդի պատմության ամենափայլուն էջերից։ Այդ մի յուրահատուկ Ավարայր էր, որտեղ օտարի լծի տակ գտնվող ժողովուրդը դուրս էր եկել համբերությունից և պատրաստ էր մարտնչել, իր կյանքը զոհել հանուն ազատության։[19]

Բերդում փակված խանը և պարսիկ ու հայ մեծամեծները մտածում էին միայն իրենց անձի փրկության մասին։ Նրանք ոչնչով չէին օգնում քաղաքի պաշտպանությանը։ Երևանը պաշտպանելու համար ոչինչ չձեռնարկեց նաև շահ Թահմազը, որն այդ ժամանակներում գտնվում էր Թավրիզում և իր տրամադրության տակ ուներ ընդամենը 6000 հոգուց բաղկացած մի ջոկատ։ Նա այդ փոքր ջոկատով Երևանին օգնության գնալը համարում էր անօգուտ և հեռանում է դեպի Խորասան, իսկ նրա մոտ գտնվող հայոց Աստվածատուր կաթողիկոսը վերադառնում է Էջմիածին։ Կաթողիկոսի Էջմիածին վերադառնալու լուրը իմանում է փաշան և հրամայում 300 հոգանոց զորքին գնալ և կաթողիկոսին բերել իր մոտ։ Զորքը հասնում է Գառնի և կաթողիկոսին փոխանցում, որ փաշան ուզում է տեսնել նրան, կաթողիկոսը տալիս է իր հնազանդությունը և վեր կենում գալիս Աբդուլլա փաշայի

17 Միրզոյան Ա., նույն տեղում., էջ 96։
18. Պողոսյան Ս. Պ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1965, էջ 288։
19. Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 89։

մոտ: Կաթողիկոսին թուրք փաշան ընդունում է պատվով և երեք օր պահում իր մոտ: Երեք օր հետո փաշան կաթողիկոսին ասում է, որ իրենք բերդը չեն տալու: Կաթողիկոսը պատասխանում է, որ ինքն անձամբ կգնա բերդ, կխոսի խանի հետ և բերդը կհանձնի փաշային: Կաթողիկոսը գնում է բերդ: Խանը լսելով կաթողիկոսի բերդ գալու լուրը, հրամայում է Մահմեդ Ղասում բեկին, որ բերդի դռները չբացեն կաթողիկոսի առաջ և ներսից խոսեն կաթողիկոսի հետ, որպեսզի իմանան թե շահից ինչ նորություն կա: Սակայն կաթողիկոսը պատասխանում է, որ շահից օգնություն չկա և իրենք իրենց գլխի ճարը տեսնեն:

Խանը հրամայում է անցկացնել խորհրդակցություն: Խորհրդակցության ժամանակ Մեժլում բեկն առաջարկում է Բերդը հանձնել: Սակայն նրան հակադրվում է Ջառջի բաչուն, ասելով, որ եթե բերդը տան, իրենց տուն ու տեղը օսմանցիները գերության կվերցնեն: Եվ ահա մի առաջարկ է անում, Մահմեդ Ղասում բեկը, այն ենթադրում էր բերդը հանձնել օսմանցիներին և նրանց հետ համաձայնություն կնքել: Խանի հրամանով խորհրդակցության են գալիս նաև բերդի քրիստոնյաները: Նրանց նույնպես համաձայնում են վերոնշյալ առաջարկին և որոշում են հրավիրել կաթողիկոսին նրա կարծիքը ևս իմանալու համար:[20]Բերդից դուրս գալն իհարկե բավականին դժվար էր լինելու: Պարոն Անդոնին բերդի պատից պարանով ցած իջեցրին: Օսմանցիները անմիջապես բռնեցին նրան և տարան փաշայի մոտ: Անդոնը նամակը հանձնեց փաշային: Փաշան Անդոնին պահեց իր մոտ և 50 հոգանոց մի զորք ուղարկեց Էջմիածին կաթողիկոսի հետևից: Կաթողիկոսն անշուշտ հնազանդվեց և գնաց փաշայի մոտ: Փաշան կաթողիկոսին ուղարկում է խանի մոտ: Բերդում իշխանները մեծ ուրախությամբ ընդունեցին կաթողիկոսին:

Կաթողիկոսը վերադառնում է փաշայի մոտ հետևյալ առաջարկով. նա ցանկանում էր հաշտություն կնքել փաշայի ու խանի մեջ, փաշան համաձայնվում է, կաթողիկոսը խնդրանքով դիմում է փաշային, որ խանին չսպանի և թույլ տա, որպեսզի նա գնա շահի մոտ, փաշան համաձայնվում է:

Կաթողիկոսը 3000 հոգանոց զորքի ուղեկցությամբ գնում է բերդի դարպասների մոտ, դարպասները բացվում են նրանց առաջ, կաթողիկոսի անմիջական մասնակցությամբ հաշտություն է կնքվում շահի և խանի միջև: 200 հոգանոց զորքի

20. Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736թ. Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ և ծանոթութիւններ, պատրաստեց Սահակ Ճեմճեմեանը, Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 33-34:

ուղեկցությամբ խանը հեռացավ:[21]

Գրավելով քաղաքը, թուրքական զորքերը կազմակերպած սպանդից բացի գերում են նաև 10 հազարից ավելի ընտանիք: Քաղաքի գրավումից մի քանի ամիս անց, սեպտեմբերի 22-ին[22](որոշ աղբյուրներում 26) հանձնվում է նաև բերդը, որի պարսկական կայազորը, խանը և որոշ պաշտոնյաներ թուրքերի թույլտվությամբ հեռանում են Պարսկաստան:

Քաղաքում թուրքերի կազմակերպած սպանդը, գերեվարությունները և բռնի մահմեդականացումները պատճառ դարձան բնակչության թվի կտրուկ նվազման:[23]

Երևանի ամրոցը դիմադրել է թուրքական բանակին մոտ երեք ամիս, իսկ քաղաքի արվարձանների հերոսական պաշտպանությունը, ըստ Աբրահամ Երևանցու տվյալների՝ տևել է ապրիլից մինչև հունիս: Կռվող հիմնական ուժը շրջակա գյուղերի և բուն Երևանի հայ ազգաբնակչությունն է եղել:

Թուրքական նվաճումների հետևանքով շատ ծանր դրություն էր ստեղծվել երկրում և Երևանում: Արյան մեջ ճնշելով երևանցիների զինված դիմադրությունը գերեվարում, տանջանքների ու բռնությունների են ենթարկում կանանց ու երեխաներին: Հովակիմ դպիրը 1725 թվականի հիշատակարանում Երևանի պաշտպանության մասին խոսելուց հետո գրում է, որ դրսից օգնության հույս չունենալու և սովի պատճառով հարկադրված են եղել բերդը հանձնել օսմանցիներին:[24]

Երևանը գրավելուց հետո օսմանյան բանակները շարունակեցին իրենց երթը դեպի արևելք. նրանք գրավեցին ամբողջ Ատրպատականը և տարիներ տևած արյունահեղ մարտերից հետո արյան մեջ խեղդեցին Ղափանի ու Ղարաբաղի ազատագրական շարժումները: Արևելյան Հայաստանը և Անդրկովկասի մեծագույն մասն ու Ատրպատականը ընկան թուրքական ծանր տիրապետության տակ:[25] Ոչ միայն Երևանում, այլև փաստորեն ամենուր, ուր երևում էին թուրքերը, հայերը նրանց ցույց էին տալիս համառ դիմադրություն: Իրենց հայրենիքը ստրկացնելու,

21. Աբրահամ Երևանցի, նշվ. աշխ., էջ 35:
22. Հակոբյան Վ. Ա., Ժամանակագրական մի փաստի ճշտման շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 5, էջ 81:
23. Կարապետյան, Մ. Մ. Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում 1724-1800 թվականներին, «Պատմա-բանասիրական հանդես», № 3, 1987, էջ 95-97:
24. Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 90:
25 Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 95:

բնակչությանը գերեվարելու նպատակով արշավանքի դուրս եկած օսմանյան զորքերի դեմ պայքարող հայերը, մասնավորապես Ղափանում, Սյունիքում ու Ղարաբաղում ակամա դառնում էին Իրանի զինակիցները, սակայն նրանք պայքարում էին ոչ հանուն Իրանի, այլ հանուն սեփական հայրենիքի:[26] Այսպիսով, Երևանի 1724թ. հերոսական պաշտպանությունը մեծ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում: Երևանի պաշտպանությունը հայ ժողովրդի ազատագրական պատերազմների պատմության հերոսական էջերից մեկն է: Անձնվիրաբար կռվող ու քաղաքը պաշտպանող հերոս հայորդիների կերպարը, նրանց չմեռնող մարտական ոգին վառ օրինակ է մեր երիտասարդության համար: Այն իրական ապացույցն է այն բանի, որ չնայած մեծաթիվ դժվարություններին, հայ ժողովուրդը բազմիցս ելել է ազգային-ազատագրական պայքարի, անցել նրա էջերով, և կերտել իր դարավոր պատմությունը: Այո, մենք այս կռվում պարտվող կողմն էինք, բայց մենք հաղթողն էինք պատմության մեջ: Երևանի հերոսամարտերի նշանակությունը չէր սահմանափակվում միայն քաղաքի մասշտաբներով: Դեպի արևելք արշավող թուրքական հսկայական բանակին ամիսներ շարունակ Երևանի տակ գամելու, մի շարք ճակատամարտերում նրան պարտության մատնելու և մեծ զոհեր խլելու շնորհիվ քաղաքի հերոս պաշտպաններն անուղղակիորեն օգնեցին Ղափանում և Ղարաբաղում ծավալված ազատագրական շարժմանը՝ ժամանակ շահելու, ուժերը վերադասավորելու և թշնամուն ավելի պատրաստ դիմավորելու համար: Վերջապես գաղտնիք չէ, որ XVIII դ. առաջին քառորդում ծավալված ազատագրական հուժկու շարժումը (որի օղակներից մեկն էլ Երևանի պաշտպանությունն էր) հարկադրեց պարսկական բռնակալներին՝ Թահմազին ու նրան հաջորդած Նադիր շահին, հաշվի նստել հայերի հետ և որոշ արտոնություններ տալ հայ մեծամեծներին ու մանավանդ եկեղեցուն: Երևանի 1724 թվականի հերոսական պաշտպանության պարտությունից և Սյունիքի ու Ղարաբաղի հայ ազատագրական շարժումները ճնշվելուց հետո, ազատասեր հայ ժողովուրդը ոչ միայն չթուլացրեց, այլ է'լ ավելի ուժեղացրեց իր պայքարը թուրք-պարսկական զավթիչների դեմ՝ հանուն իր հայրենիքի ազատության ու անկախության:

26. Զուլալյան Մ., Հայ ժողովրդի XIII—XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990, էջ 204:

2. ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգից ուսուցման եռակենտրոն համակարգի (գիտելիքներ/կարողություններ/հմտություններ, արժեքային համակարգ և դիրքորոշում) և խնդիր է դրվել սովորեցնել սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները: Փաստորեն, այսպես կոչված նոր մեթոդները նոր խնդիրների լուծմանը ծառայող մանկավարժական զինանոցում արդեն եղած մեթոդներն են, որոնք ստանում են նոր իմաստ, երանգ ու շեշտադրում:[27]

«Ուսուցման մեթոդը» բարդ և բազմակողմանի հասկացություն է: Առաջին հերթին դա պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչո՞ւ սովորեցնել (կրթության նպատակներ) և ինչպե՞ս սովորեցել (ուսուցման մեթոդիկա): Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակները իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման՝ նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը: Այսպիսով, ուսուցման գործընթացում մեթոդն ունի կապող օղակի բարդ և առանձանահատուկ դեր: Ի՞նչ է մեթոդը: Մեթոդը հունարեն բառ է, որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողություն:

Այսպիսով՝ ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը: Ուսուցչի մեթոդական կոմպետենտությունը ուսուցման գործընթացի

27. Ղուկասյան Ա., Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2013, էջ 21:

արդյունավետությունը ապահովող կարևոր ուղիներից մեկն է: Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ: Դրանց մի մասը հաջողությամբ բռնել են ժամանակի քննությունը, ավանդաբար կիրառվել և կիրառվելու են:

Բնական է, որ ուսուցիչը միանգամից մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է յուրաքանչյուր որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի ընտրություն: Ուսուցման մեթոդների ընտրության հիմքում ընկած են դիդակտիկական այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում: Մանկավարժական գրականության մեջ առանձնացված են ուսուցման մեթոդների ընտրության վրա ազդող մի շարք գործոններ՝

- ուսուցման նպատակներն ու խնդիրները
- բովանդակությունը
- ուսուցանվող նյութի ծավալն ու բարդության աստիճանը
- սովորողների իմացական մակարդակը
- սովորողների դրական կամ բացասական դիրքորոշումը
- սովորողների տարիքային առանձնահատկություններն ու աշխատունակությունը
- նյութի յուրացմանը հատկացվող ժամաքանակը
- ուսուցման նյութատեխնիկական և կազմակերպական պայմանները
- մինչ այդ կիրառված մեթոդները
- դասի տեսակներն ու ձևերը
- սուբյեկտ-օբյեկտ և սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերությունները
- դասարանի կազմը
- ուսուցչի մասնագիտական գործիմացությունը

Հաշվի առնելով ուսուցման մեթոդի ընտրության վրա ազդող թվարկված գործոնները, պատմաբան-ուսուցիչը պետք է դիտարկի առկա փաստերը,

նախագծելով դրանց կանխատեսելի և անկանխատեսելի զարգացումներն ու հետևանքները: Ընտրված յուրաքանչյուր մեթոդ պատմաբան-ուսուցչի մտածողության ելակետային ընթացակարգն է: Դասագործընթացում հաջորդականությամբ կիրառվող այս կամ այն մեթոդը ենթադրում է փաստերի ամբողջական հետազոտում՝ դրանց պատմական ժամանակին և տարաբնույթ զարգացումներին զուգընթաց: Այսպիսով, նոր, փոխներգործուն մեթոդների լայնածավալ կիրառումն ու մեթոդական ճկուն համակարգի ստեղծումը, որը ներառում է ժամանակակից տեխնոլոգիական մոտեցումներ և հնարավորություններ, չափազանց կարևոր է և անհրաժեշտ: Ակներև է, որ պատմաբան-ուսուցչի առջև ծառացած առավել հրատապ խնդիրներից է ուսումնական գործընթացի նպատակային կառուցարկումը և այդ գործընթացում ուսուցման այնպիսի մեթոդների ընտրությունը, որոնք պետք է կրեն գիտականորեն հիմնավորված բնույթ: Ստորև կվերլուծենք ուսուցման փոխներգործուն այնպիսի մեթոդներ, որոնք պատմաբան-ուսուցիչը կարող է կիրառել դասագործընթացի խթանման, իմաստի ընկալման և կշռադատման փուլերում: Ստորև ներկայացնում ենք այնպիսի մեթոդներ, որոնք կարելի է կիրառել տվյալ թեմայի դասավանդման ընթացքում.

«Մտքերի տարափը» կամ «մտագրոհը» սովորողների աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդներից է: Դրա գլխավոր գործառույթը մտքերի վերարտադրումն է: Այս մեթոդը մտքերի տարափ են անվանում, քանի որ խրախուսվում է հաճախ պարզապես ուսումնասիրվող նյութի հետ այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը.



Պատմության դասավանդման գործընթացի արդյունավետ իրացման նպատակով, պատեհ ենք համարում նաև «Պրիզմա» ակտիվ մեթոդի կիրառումը: Այս մեթոդը նպաստում է սովորողների ազատ և անկաշկանդ մտածողության զարգացմանը: Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող պատմական երևույթի,

փաստի, հասկացության, իրադարձության կամ գաղափարի վերաբերյալ սովորողների ենթագիտակցության մեջ առկա ասոցիատիվ կապերի արձանագրումն ու բացահայտումն է:



Ունենալով իրադարձությունների սկիզբը և ավարտը, աշակերտը լրացնում է աղյուսակը, տալով իրադարձությունների շարքի հանգամանալի վերլուծությունը, ինչն էլ հնարավորություն է տալիս զարգացնել աշակերտի գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև ինքնուրույն ճանաչողական գործունեությունը:

Տվյալ թեմայի դասավանդման ընթացքում առավել նպատակահարմար է կիրառել նաև T-աձև աղյուսակ մեթոդը: T-աձև աղյուսակ, օգտագործվում է միևնույն հասկացության կամ խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Պիտանի է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ իրականացնելիս:

Ներկայացնենք Երևանի 1724թ. հերոսական պաշտպանության դրական և բացասական նշանակությունը՝ նշված աղյուսակի միջոցով.

Դրական նշանակություն	Բացասական նշանակություն
✓ հայ ժողովրդի ազատագրական պատերազմների պատմության հերոսական էջերից մեկն է ✓ հայերը անձնվիրաբար կռվեցին հանուն իրենց քաղաքի և ազատության, բարձր պահելով մարտական ոգին ✓ քաղաքի հերոս պաշտպաններն անուղղակիորեն օգնեցին Ղափանում և Ղարաբաղում ծավալված ազատագրական շարժմանը՝ ժամանակ շահելու, ուժերը վերադասավորելու և թշնամուն ավելի պատրաստ դիմավորելու համար ✓ հարկադրեց պարսկական բռնակալներին՝ Թահմազին ու նրան հաջորդած Նադիր շահին, հաշվի նստել հայերի հետ և որոշ արտոնություններ տալ հայ մեծամեծներին ու մանավանդ եկեղեցուն	✓ քաղաքը ենթարկվեց ավերի ու ավարի ✓ բնակչությունը սրի քաշվեց ու գերեվարվեց ✓ հայ ժողովրդի հույսերը՝ օգնություն ստանալ Ռուսաստանից կամ Պարսկաստանից կրկին չարդարացվեցին ✓ քաղաքում թուրքերի կազմակերպած սպանդը, գերեվարությունները և բռնի մահմեդականացումները պատճառ դարձան բնակչության թվի կտրուկ նվազման ✓ չնայած հայ ժողովրդի անձնուրաց մարտնչությանը թուրքերի գրավեցին քաղաքը, այնուհետև խլեցին վերջին հենակետ Երևանի բերդը

Աշակերտներն իրենց տետրերում գրի են առնում նմանատիպ աղյուսակները, որոնք դասը սովորելու ժամանակ, օգնում են պատկերացնել պատմական ժամանակաշրջանի առանձնահատկությունները և օրինաչափությունները: Ժամանակի ընթացքում, աշակերտների մոտ ի հայտ են գալիս որոշակի հմտություններ, նրանք կարողանում են ինքնուրույն դատողություններ անել տվյալ

թեմայի վերաբերյալ, կարողանում են տալ որևէ պատմական փաստի կամ իրադարձության նշանակությունը և այլն: Զարգանում է նրանց ինքնուրույն ճանաչողական գործունեությունը, որը ենթադրում է դասընթացի ուսումնական նյութերի ամբողջական յուրացումը, որի շնորհիվ աշակերտները կարողանում են բացահայտել իմաստով ավարտուն մտքերը և դասընթացի հիմնական հասկացությունները:[28]

Առավել նպատակահարմար է կիրառել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝«քեյս», «քառաբաժան աղյուսակ», Վեննի դիագրամ և այլ մեթոդները: «Քեյս» մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ սովորողներին ընձեռվում է, որոշակի պատմական իրավիճակում հայտնվելու, այս կամ այն պատմական իրադարձության խաղարկման հնարավորություն, ինչի արդյունքում, նրանք կշռադատում և գիտակցում են դրանց նշանակալիությունն ու կարևորությունը, ձևավորելով սեփական դիրքորոշումներ և համոզմունքներ խնդրո առարկայի վերաբերյալ: Այսպես օրինակ, առաջ է քաշվում տվյալ իրավիճակը. եթե դուք լինեիք տվյալ պատմական ժամանակաշրջանում, և լինեիք օրինակ Երևանի խանը կամ Հայոց կաթողիկոսը, ի՞նչ միջոցներ կձեռնարկեիք Երևանի բերդը թուրքերին չհանձնելու համար: «Քառաբաժան» աղյուսակը հետաքրքիր մեթոդական հնար է, որը հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս: Քառաբաժանը արդեն ներկայացված շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս: Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել 4 բաժիններից յուրաքանչյուրում: Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված. դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին, հետևաբար՝ նպատակահարմար չէ դրանք փոփոխել: Կարելի է իհարկե դրանք զարգացնել նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները:

28. Պապոյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան 2013, էջ 37:

Ի՞նչ գիտեի	ի՞նչ իմացա
ինչպե՞ս կարող եմ օգտագործել	ի՞նչ եզրակացություն արեցի

Վեննի դիագրամը նույնպես նպաստում է աշակերտների պատմական մտածողության զարգացմանը, այն հնարավորություն է տալիս գաղափարները միմյանց հակադրել կամ դրանց ընդհանրությունը ցույց տալ: Այսպես՝ կարող ենք

Երևանի պաշտպանություն ընդհանրություն Սյունիքի պաշտպանություն

համեմատել:



Պատմության դասավանդման ընթացքում կարևոր կրթադաստիարակչական դեր են կատարում պատմական խոշոր գործիչների դիմանկարների ցուցադրումը, որի հիմնական նպատակն է տեսողության միջոցով որոշակիացնել, ամրապնդել նրանց բնութագիրը:[29] Ուստի այս թեման ուսումնասիրելիս ուսուցիչը կարող է ցուցադրել տվյալ պատմական ժամանակաշրջանի համար կարևորագույն անձանց դիմանկարները (հավելված 1):

Դպրոցականների պատմական կրթության, տարածապատկերային մտածողության, պատկերացումների առաջացման և զարգացման խնդրում շատ մեծ դեր ունեն քարտեզները:[30] Պատմական և քարտեզագիտական գիտելիքները գտնվում

29. Պապոյան Հ., նշվ. աշխ., էջ 130:
30. Պապոյան Հ., նշվ.աշխ., էջ 137:

են ամուր փոխհարաբերությունների մեջ: Պատմական քարտեզները միջոց են, ավելի գիտակցված ընկալելու պատմական իրադարձություններն ու երևույթները: Այն նպաստում է սովորողների ճանաչողական հմտությունների, ինքնուրույն և պատկերային մտածողության զարգացմանը:[31] Ուստի ուսուցիչը պետք է աշխատի տվյալ թեմային համապատասխան քարտեզներով(հավելված 2):

Պատմության դասավանդման ընթացքում կարևոր դեր ունի նաև զննականությունը: Պատկերային զննականության մեջ զգալի դեր են կատարում ուսումնական նկարները: Նկարները պատկերացում են տալիս եզակի իրադարձությունների վերաբերյալ: Շատ հաճախ դրանք վերստեղծում են պատմության վճռական պահը, կամ պատմական որոշակի վայր: Դասի ժամանակ նկարը օգտագործվում է տարբեր նպատակներով որպես գիտելիքի ելակետային աղբյուր, պատումի նկարազարդում, ամրապնդման միջոց և այլն:[32] Ուստի կարելի է ցուցադրել նաև թեմային առնչվող նկարներ (հավելված 3):

Գիտելիքների ստուգումն ու գնահատումը ուսուցման գործընթացի բաղկացուցիչ մասն է, որն իրականացվում է դասին և տանը աշակերտների ուսումնական գործունեության անընդհատ վերահսկողությամբ՝ բանավոր, գրավոր, գործնական առաջադրանքներ, նրանց աշխատանքին անմիջականորեն հետևելու միջոցով: Ստուգման և գնահատման օգնությամբ բացահայտվում են գիտելիքները, որոնք յուրացրել են աշակերտները, ձեռքբերումներն ու բացթողումները, ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը:

Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության ինչպիսի մակարդակի է հասել սովորողը: Այդ տեղեկատվությունը հավաքելու համար կարելի է օգտագործել գնահատման բազմաթիվ միջոցներ: Դրանք կարող են ներառել բազմաթիվ դիտարկումները, գրավոր թեստերը, տնային աշխատանքները, հետազոտական բնույթի աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, և այլն: Դրանց մեջ ուրույն տեղ ունեն գրավոր թեստերը, որոնք գիտելիքների ստուգման ժամանակակից արդյունավետ եղանակներից են:

Ստորև ներկայացնում ենք «Երևանի 1724թ. հերոսական պաշտպանությունը» թեմայի ստուգման համար նախատեսված թեստի նմուշ-օրինակ.

31. Պապոյան Հ., նշվ.աշխ., էջ 142:
32. Նույն տեղում, էջ 128-129:

Թեստ 1

Հայոց պատմությունից

Ամիս/ամսաթիվ _____

Թեմա՝ Երևանի 1724թ. հերոսական պաշտպանություն

Դասարան՝_____

Աշակերտ՝_____

1. Ե՞րբ է գրավվել Երևանի բերդը.

   ա. 1724թ. սեպտեմբերի 22 բ. 1724թ. հունիսի 7

   գ. 1724թ. հուլիսի 12 դ. 1724թ. ապրիլի 7

2. Ո՞վ էր տվյալ պատմական ժամանակաշրջանում Ամենայն Հայոց կաթողիկոսը.

   ա. Եսայի Հասան-Ջալալյան բ. Աղեքսանդր Ա Ջուղայեցի

   գ. Աստվածատուր Ա Համադանցի դ. Կարապետ Բ Ուլնեցի

3. Ո՞վ էր Երևանի խանը հերոսական պաշտպանության ժամանակ.

   _____

4. Ո՞վ էր թուրքական զորքերի հրամանատարը.

   _____

5. Թվարկե՛ք քաղաքը պաշտպանող մի քանի հայորդու անուններ.

   _____

6. Ինչո՞ւ բերդը անձնատուր եղավ թուրքերին.

   _____

7. Ի՞նչ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում Երևանի հերոսական պաշտպանությունը.

   _____

Աշակերտների գիտելիքները ստուգելու համար շատ տարածված է հարցերի կամ հարցադրումների մեթոդը: Այս մեթոդը կարևոր միջոց է աշակերտների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու և համակարգելու, ստեղծագործական ու քննադատական մտածողությունը զարգացնելու համար: Ուսուցչի կողմից ներկայացվող հարցերը պետք է լինեն. *հստակ, հակիրճ, տեղին ու ժամանակին, նպատակառուղղված:* Բացի այդ հարցերը պետք է ունենան տրամաբանական հաջորդականություն, համապատասխանեն աշակերտների ունակություններին և մտածելու տեղիք տան:

Ինչպես օրինակ.

1. Ինչպե՞ս եք գնահատում Երևանի խանի գործունեությունը, հերոսամարտի օրերին:
2. Ի՞նչ կարծիք ունեք Ռուսաստանի հայ ժողովրդի հանդեպ ունեցած վերաբերմունքի հանդեպ:

Այսպիսի հարցերը կոչվում են բաց հարցեր, որոնք չեն ենթադրում միանշանակ պատասխաններ, այլ հնարավորություն են տալիս պատասխանի մեջ լինել ազատ:

3. Ե՞րբ են թուրքերը հարձակվել քաղաքի վրա:
4. Ե՞րբ է գրավվել Երևանի բերդը:

Նմանատիպ հարցերը փակ հարցեր են, որոնք պահանջում են միանշանակ պատասխաններ:

Այսպիսով, հարցերի մեթոդն ավելի մեծ խնդիր է լուծում, քան փաստերի բուն մտապահումը: Հարցերից ծնվում է երկխոսություն, որի ընթացքում սովորողը ծանոթանում է ընկերների արտահայտած մտքերի բազմազանության հետ, որն իր հերթին ընդլայնում է ողջ դասարանի բառապաշարը, հասկացությունների շրջանակը և մտքերը ստեղծագործաբար արտահայտելու նրանց կարողությունը: Սովորողները հասկանում են, որ հարցերի միջոցով իրենց գիտելիքները դառնում են արժեքավոր, քանի որ այդ գիտելիքները նրանք կարողանում են նպատակային ձևով համադրել, վերլուծել ու օգտագործել:[33]

33. Ղուկասյան Ա., նույն տեղում, էջ 24:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերոնշյալը, հանգել ենք հետևյալին.

✓ Հայերն անձնվիրաբար կռվեցին հանուն իրենց քաղաքի և ազատության, բարձր պահելով մարտական ոգին:

✓ Երևանի հերոսամարտերի նշանակությունը չէր սահմանափակվում միայն քաղաքի մասշտաբներով: Դեպի արևելք արշավող թուրքական հսկայական բանակին ամիսներ շարունակ Երևանի տակ գամելու, մի շարք ճակատամարտերում նրան պարտության մատնելու և մեծ զոհեր խլելու շնորհիվ քաղաքի հերոս պաշտպաններն անուղղակիորեն օգնեցին Ղափանում և Ղարաբաղում ծավալված ազատագրական շարժմանը՝ ժամանակ շահելու, ուժերը վերադասավորելու և թշնամուն ավելի պատրաստ դիմավորելու համար:

✓ XVIII դ. առաջին քառորդում ծավալված ազատագրական հուժկու շարժումը (որի օղակներից մեկն էլ Երևանի պաշտպանությունն էր) հարկադրեց պարսկական բռնակալներին՝ Թահմազին ու նրան հաջորդած Նադիր շահին, հաշվի նստել հայերի հետ և որոշ արտոնություններ տալ հայ մեծամեծներին ու մանավանդ եկեղեցուն:

✓ Քաղաքը ենթարկվեց ավերի ու ավարի, բնակչությունը սրի քաշվեց ու գերեվարվեց;

✓ Հայ ժողովրդի հույսերը՝ օգնություն ստանալ Ռուսաստանից կամ Պարսկաստանից կրկին չարդարացվեցին:

✓ Քաղաքում թուրքերի կազմակերպած սպանդը, գերեվարությունները և բռնի մահմեդականացումները պատճառ դարձան բնակչության թվի կտրուկ նվազման:

✓ Չնայած հայ ժողովրդի անձնուրաց մարտնչությանը, թուրքերի գրավեցին քաղաքը, այնուհետև խլեցին վերջին հենակետ Երևանի բերդը:

✓ Երևանի ամրոցը դիմադրել է թուրքական բանակին մոտ երեք ամիս, իսկ քաղաքի արվարձանների հերոսական պաշտպանությունը, ըստ Աբրահամ Երևանցու տվյալների՝ տևել է ապրիլից մինչև հունիս: Կռվող հիմնական ուժը շրջական գյուղերի և բուն Երևանի հայ ազգաբնակչությունն է եղել:

✓ Երևանի հերոսական պաշտպանությունը հայ ժողովրդի ազատագրական պատերազմների պատմության հերոսական էջերից մեկն է:

✓ Դասավանդվող նյութի դյուրին ու հիմնավոր յուրացումը սովորողների կողմից կախված է ոչ միայն նրանց ընդունակություններից, բազային կրթությունից և դասավանդման մեթոդներից, այլև սովորելու առավել նախընտրական ոճից: Այսպես՝ կան աշակերտներ, որոնց համար առավել նախընտրելի է տեղեկատվության (գիտելիքի) պատկերային կամ տեսողական, մյուսների համար՝ լսողական կամ հաղորդակցական, երրորդների համար՝ շոշափողական յուրացումը: Դասարանում միշտ առկա են բազային տարբեր գիտելիքներով, սովորելու տարբեր ոճեր նախընտրող աշակերտներ: Հետևաբար՝ դասընթացի կառավարման արդյունավետությունը կբարձրանա եթե դասավանդման մեթոդները համադրենք այնպես, որ գործարկվեն տարբեր զգայարաններ: Այդ դեպքում յուրաքանչյուր աշակերտի համար նյութի յուրացումը կհասնի առավելագույն մակարդակի:

✓ Ուսուցման մեթոդը մանկավարժական գործունեության մի միջոց է, հնար հիմնական գործիք, որով իրականացվում է ուսուցչի և աշակերտի համագործակցությունը՝ ուղղված ուսումնառության նախանշված արդյունքին, գիտելիքների ձեռք բերմանը, կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

✓ Ցանկացած դասուսուցում և մեթոդների կիրառում տալիս է սովորողներին գիտելիք: Գիտելիքների յուրացումը թույլ և ուժեղ սովորող աշակերտների մոտ կատարվում է տարբեր ձևով: Մանկավարժի խնդիրն է հաշվի առնել աշակերտների ընդունակությունները, կարողությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736թ. Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ և ծանոթութիւններ, պատրաստեց Սահակ Ճեմճեմեանը, Վենետիկ-Ս. Ղազար, 1977:
2. Այվազյան Ա., 1724թ. երևանի պաշտպանությունը հայ ազատագրական շարժման և պարսից իշխանությունների հարաբերությունների թնջուկում, Արևելագիտության հարցեր, հ. 6, Երևան, 2006:
3. Զուլալյան Մ., Հայ ժողովրդի XIII—XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990:
4. Ժամկոչյան Հ. Գ., Աբրահամյան Ա. Գ., Մելիք-Բախշյան Ս. Տ., Պողոսյան Ս. Պ., Հայ ժողովրդի պատմություն(սկզբից մինչև XVIII դարի վերջը), Երևան, 1975:
5. Հակոբյան Թ., Երևանի պատմություն(1500-1800թթ.), Երևան, 1971:
6. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱԱ հրատ., հ. 4, Երևան, 1972:
7. Հայոց պատմություն, Հիմնահարցեր, Երևան, 2000:
8. Մելքոնյան Ա., Հայոց պատմության ակնարկներ(հնագույն ժամանակներից մինչև XX դարի վերջը), Երևան, 2018:
9. Պողոսյան Ս. Պ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1965:
10. Арутюнян П. Т., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954.
11. Армяно-русские отношения в первой трети XVIII века(Сборник документов), т. II, ч. II, Ереван, 1967.

Գիտական հոդվածներ

1. Կարապետյան, Մ. Մ. Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում 1724-1800 թվականներին, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 3,:
2. Հակոբյան Վ. Ա., Ժամանակագրական մի փաստի ճշտման շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 5:

3. Մարտիրոսյան Վ. Մ., Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2:
4. Միրզոյան Ա., Երևանի 1724թ. հերոսական պաշտպանությունը թուրքական զավթիչներից, «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 3:

Փաստաթղթերի ժողովածու

1. Армяно-русские отношения в первой трети XVIII века(Сборник документов), т. II, ч. II, Ереван, 1967.

Մեթոդական գրականություն

1. Ղուկասյան Ա., Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2013:
2. Պապոյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան 2013:

Հավելված 1

Աստվածատուր Ա Համադանցի (1715-1725)



Հավելված 2

Ազատագրական պայքարը XVIII դարի 20-ական թվականներին



Հավելված 3

Երևանի բերդ